

«ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑ ՎԱՐԴԱՆԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԻ»

Փ. Փ. ԱՆԹԱՐՅԱՆ

Հայ ձեռագրական ժառանգության մեջ պահպանվել է աշխարհագրական մի ուշագրավ աշխատություն, որն իր նյութերի տարածքային և ժամանակագրական ընդգրկումներով ու պատմաաշխարհագրական արժեքով միջնադարից մեզ հասած այդ բնույթի բոլոր երկերի մեջ երկրորդն է՝ VII դարի հանրահայտ «Աշխարհացոյց»-ից հետո: Իր ուրույն բովանդակության համար ուշադրության է արժանացել դեռ վաղ ժամանակներից: Նրան առնչվել են հաճախ, և այն բազմաթիվ ընդօրինակություններով (100-ից ավելի այսօր մեր ձեռքի տակ են) լայն տարածում է գտել Հայաստանում և հայ դաղթօջախներում, միաժամանակ արժանանալով շատ գործուն վերաբերմունքի, ինչպես ցույց են տալիս բնագրական բազմահերթ և բազմապիսի միջամտությունները:

«Աշխարհացոյցը» աղբյուրագիտական երբեմն շատ արժեքավոր հաղորդումներ է տալիս, որոնք այլուր և ոչ մի տեղ չեն նկատվել, կամ բազմաթիվ լրացումներ ու ճշգրտումներ հնարավոր են դառնում միայն ըստ նրա տվյալների: Օրինակ՝ Մատենյան դեռ ավելի քան մեկուկես դար առաջ (1819 թ.) այս մասին հետևյալն է նշել. «Մեծ թվով մանրամասնություններ ունի այս երկրում (իմա՝ Հայաստանում—Փ. Ա.) ընդունված (աշխարհագրական) բաժանումների և անվանումների դարերի ընթացքում կրած առաջ փոփոխությունների մասին, որոնք բացարձակապես անկարելի է գտնել այլուր»¹: Նույնչափ բարձր գնահատական է առաջ հայ աշխարհագրական երկերի լավագույն գիտականերից Ղ. Ինճիճյանը. «Յայսմ Աշխարհագրութեան ըստ մեծի մասին է ստորագրութիւն մանաւանդ թէ անուանակոչութիւն տեղեաց՝ նշանագրէ նաև զնոր անունս, ոչ սակաւ լոյս տալ մեզ յայսմ մասին, որպէս կարես տեսանել ի մերում «Ստորագրութեան Մեծին Հայոց», զոր բաղում ուրեք յիշատակեմք, առեալ բաղադրութեամբ զանազան ձեռագրաց»²: Բ. Սարգիսյանը այն նկատում է «հույժ շահեկան», նշելով հետևյալը. «Համեմայն դեպս հույժ շահեկան է Աշխարհացոյցս վասն ոչ միայն շարունակութեամբ կլրացնե խորենացվո Աշխարհագրութիւնը, այլ այնու մանավանդ, որ հին անուններուն առընթեր կկարգե անոնց հընթացս ժամանակին առած նորանոր հորջորջմունքն ևս, օգտակար տեղեկութիւններով»³: Հ. Տաշյանը ևս ընդգծում է «Աշխարհացոյց»-ի աղբյուրագիտական «հնախոսական» այս նշանակությունը⁴:

«Աշխարհացոյց»-ը կարևոր հիմք է տարբեր ժամանակներում դանազան վարչական միավորություններում եղած տարածքային փոփոխությունների ուսումնասիրման և թագավորական կամ իշխանական տների տիրույթների սահմաններն ու ազդեցությունների ոլորտները ճշտելու համար՝ ըստ այնտեղ արտահայտված փոփոխությունների:

Այստեղ հաճախ է խոսք լինում բազմաթիվ վանքերի մասին, որոնցից շատերն այսօր փլատակների են վերածվել, շատ դեպքերում՝ նրանց տեղն իսկ անհայտ և անհետ է: Այդ վանքերի հետ կապված են հայ մշակույթի բազմա-

¹ J. Saint-Martin. Mémoires historiques et géographiques sur l'Arménie. T. II, Paris, 1819, p. 455.

² Ղ. Ինճիճյան. Հնախոսութիւն Հայաստանեայց աշխարհի. հ. Գ, Վենետիկ, 1835, էջ 315:

³ Բ. Սարգիսյան. Մարցոյցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարյան ի վենետիկ. հ. Բ, Վենետիկ, 1924, էջ 810:

⁴ Հ. Տաշյան. Հին Հայաստանի արևմտյան սահմանը. Վիեննա, 1948, էջ 108:

թիվ գործիչների անուններ և հայ ժողովրդի անցյալ հոգևոր կյանքում իրենց բերդը գեղը կատարած նվիրական ավանդություններ: Այս տեսանկյունից «Աշխարհացոյց»-ի մեջ նրանց մասին ասված խոսքը ևս, անկասկած, աշխարհագրական, աղբյուրագիտական և պատմական որոշակի արժեք է ներկայացնում:

Բայց ոչ միայն գիտակցվել է «Աշխարհացոյց»-ի աղբյուրագիտական արժեքը, ալլև զանազան ուսումնասիրությունների մեջ այն օգտագործվել է իբրև սկզբնաղբյուր: Դատելով նաև մասնագետների կողմից նրան ընծայված կարեւորությունից ու գիտական շրջանառության մեջ դրվելու հաճախակիությունից՝ կասկած չի մնում, որ «Աշխարհացոյց»-ը հակառակ իր խիստ համառոտ բանության, պատմաաշխարհագրական կարևոր սկզբնաղբյուր է:

«Աշխարհացոյցը» արժանացել է մի քանի հրատարակության. առաջին անգամ 1728 թ., Կ. Պոլսում, Երեմիա Մեղրեցու Բաղրքին առնթեր, երկրորդ անգամ՝ 1819 թ., Փարիզում, Ֆրանսերեն թարգմանության հետ ղուգահեռ, երրորդ անգամ՝ 1887 թ., Վենետիկում, «Բազմավեպի» մեջ:

Հիշյալներից և ոչ մեկը «Աշխարհացոյց»-ի քննական-համեմատական բնագիրը չի ներկայացնում, իսկ որ այդպիսի բնագրի պակասը վաղուց էր զգացվում, միանգամայն որոշ է, մանավանդ այսպիսի մի երկի, որը ժամանակի ընթացքում հիմնական փոփոխություններ է կրել:

Այդ պակասը լրացնելու համար Ֆրանսահայ հայագետ Հ. Պերպերյանը ձեռնարկել է մի նոր՝ շորորոգ հրատարակություն, որը լույս է տեսել 1960 թ. Փարիզում: Նա քննական համեմատության է ենթարկել և ընդգրկել է վերոհիշյալ հրատարակությունները, Երուսաղեմի, Վենետիկի, Փարիզի Ազգային և Լոնդոնի Բրիտանական թանգարանի մատենադարաններում պահվող 24 ձեռագրեր: Հրատարակությունը այս առումով կարևոր ներդրում է: Նրա նշանակությունը ավելի է մեծացնում ընդարձակ ներածությունը, ուր ասված են բանասիրական արժեքավոր պարզաբանումներ:

«Աշխարհացոյց»-ը, ցավոք, մեզ է հասել միայն ուշ ժամանակների ընդօրինակություններով: Թվագրված ամենավաղ ընդօրինակությունը 1565 թ. է⁵, հորինման օրերից շուրջ երեք հարյուր տարի հետո կատարված: Բնական է, որ աշխատության նկատմամբ եղած հետաքրքրության և այնքան ձիգ ժամանակամիջոցի պատճառով նրա բնագիրը չէր կարող անաղարտ մնալ: Չեռագրերի նախնական ուսումնասիրությունն իսկ, ինչպես կտեսնենք ստորև, հաստատում է, որ այդ այդպես է իրոք: Այստեղից էլ դժվարությունների ու տարակուսանքների այն շղթան, որը օղակ-օղակ հյուսվել է նրա շուրջ մինչև մեր օրերը:

Հաճախակի միջամտությունները բնագրական տարբերակներ, խմբագրություններ են ստեղծել, որոնք բանասերների կողմից հիմնականում բաժանվել են երկուսի՝ համառոտի և ընդարձակի⁶: Այս ճիշտ է ըստ էության, բայց իրողությունը չի ներկայացնում լրիվ, որովհետև, ինչպես ժամանակին նկատվել է, դրանցից և ոչ մեկը միատարր, միակերպ չէ, շատ են սարքեր իրենք իրենց իսկ համեմատությամբ⁸: Բարեբախտաբար, ձեռագրերը համառոտ և ընդարձակ խմբագրությունները որոշակիորեն պարանջատելու լավարար դյուրություն ընծայում են: Այսօր ձեռքի տակ ունենք երկու հատկանշական ձեռագիր, որոնցում ամենայն հստակությամբ նկատելի է դրանց իրարից դատորոշող սահմանագիծը: Մեկը՝ Երուսաղեմի Ս. Հակոբյանց մատենադարանի № 1506, մյուսը՝ Մաշտոցի անվան Մատենադարանի № 2748 ձեռագիրն է: Դրանց գրադաշտում՝ առաջինում XVI դարում, իսկ երկրորդում՝ 1619 թ., ըն-

5 Մանրամասն տե՛ս մեր հոդվածը. Վարդան Արևելցու «Աշխարհացոյց»-ը և նրա նոր հրատարակությունը.— «Բանբեր Մատենադարանի», 1962, № 6, էջ 283—291:

6 Բ. Սարգիսյան. նշվ., աշխ., էջ 630, 633:

7 Աշխարհացոյց Վարդանայ վարդապետի, քննական հրատարակություն Հ. Պերպերյանի. Բարիզ, 1960, էջ ԺԵ, ԻԸ, ԻԹ և հտ. (այսուհետև՝ Աշխարհացոյց):

8 Նույն տեղում, էջ ԺԶ:

յօրինակվել է համառոտ խմբագրության բնագիրը, սակայն, ավելի հետո, այսինի չէ երբ, բայց XVII դարից ոչ ուշ, լուսանցքներում զետեղվել է ընդարձակ բնագիրը⁹։ Ավելի պարզորոշ վիճակ դժվար է պատկերացնել։ Մյուս ձեռագրերի համեմատությունից էլ, ինչպես արդեն նշել ենք, նույն պատկերն է հաստատվում։ Դեռ ավելին. ակներև է դառնում, որ, իրապես, բնագրական կաշուն ընդգծվում ո՛չ համառոտն ունի և ո՛չ էլ ընդարձակը։ Կա ընդարձակ խմբագրության ևս մի տարբերակ, որը կառուցվածքով, բնագրական որոշ տեղաշարժերով, նյութի ընդգրկմամբ ու հետագա ընդմիջարկություններով բավականին այլ տեսք ունի, քան ընդարձակի արդեն իսկ նկատված տարբերակը, որը նույնպես, ինքն իր մեջ լիովին միասնարո չէ։ Դրա տարբերակիչ հիմնական հանդամանքներից են.

ա—սովորաբար շունի Դա գլուխը (ըստ Հ. Պերպերյանի հրատարակության¹⁰),

բ—Մոսկվան հիշատակվում է ոչ միշտ,

գ—երբեմն միայն ընդգրկում է Գրիգոր Լուսավորչի կանթեղի վերաբերյալ հայտնի ավանդությունը,

դ—ունի ուրույն մանր ընդմիջարկություններ։

Այս «երրորդ», ինչպես գրել է Հ. Պերպերյանը, կամ «խառն» խմբագրության բնագիրը ներկայացնող ձեռագրերից են Մաշտոցի անվան Մատենադարանի № 1102, 1487, 2292, 7085, 7993, 8261, 8727... ձեռագրերը։

Այստեղից հետևում է, որ «Աշխարհացոյց»-ը գոնե երկու անգամ ենթարկվել է հիմնական խմբագրման։ Այս առիթով նկատառելի են բանասերներից հատկապես Գ. Հովսեփյանի և Հ. Պերպերյանի կարծիքները։ Առաջինը եզրակացնում է, որ այն «ԺԴ դարի կեսերից առաջ խմբագրված» է, իսկ երկրորդը այս ժամկետը մղում է ավելի ետ՝ «...սկզբնագիրը անորոշ թվականի մը, թերևս նույնիսկ ԺԴ դարու վերջերը ենթարկված է խմբագրության մը»¹¹։ Ժամանակին մեզ հավանական էր թվացել երկրորդ կարծիքը¹², սակայն այժմ հակված ենք ավելի ընդունելի համարելու առաջինը, որովհետև առկա ընդմիջարկությունները ժամանակագրականորեն վերաբերում են ոչ ավելի վաղ շրջանի, քան XIV դարի առաջին կեսը, ինչպես կոեսենք քիչ հետո։ Նկատելի է, որ այդ ժամանակ էլ այն ընկալել է ընդմիջարկությունների մի սովորական և աստիճանաբար ստեղծվել է ընդարձակի հավանաբար նախ այսպես կոչված «խառն» տարբերակը, իբրև «անցման» շրջանի հիմք, ապա՝ ձեռնադրվել բուն ընդարձակ խմբագրությունը՝ սկսած XV դարից։

Այս առնչությամբ նկատելի իրողություն է այն, որ ընդարձակ խմբագրության որոշ ձեռագրերում մի շարք հրաշապատումների հետ առկա է նաև Գրիգոր Լուսավորչի անմար կանթեղի ավանդությունը։ Շատ այլ ձեռագրերում այն բացակայում է։ Այս պատճառով ընդարձակ խմբագրության մեջ երևան է գալիս մեկ այլ բնագրային պատկեր։ Եթե առաջին խմբագրման ժամանակ այն ընդգրկված լիներ, հաղիվ թե հետագայում նման նվիրականացած ավանդությունը դուռս մղվեց որևէ մեկի կողմից։ Ավելի հավանական է, որ հետո է մուծվել՝ իր հետ բերելով բնագրային այլ օժանդակ փոփոխություններ։ Ուստի, հնարավոր է դառնում մտածել, որ ընդարձակ խմբագրությունը ունի իր մեկից ավելի տարբերակներ, բացի այն, որ հաճախակի շարունակական ընդմիջարկությունների պատճառով կրել է բազմաթիվ մասնակի փոփոխություններ։

Աղբյուրագիտական տեսակետից Վարդանի «Աշխարհացոյց»-ը ուրույն էրկ է։ VII դարի «Աշխարհացոյց»-ին առնչվում է խիստ հազվագեպ¹³, թեև

⁹ Նույն տեղում, էջ Ժ։ Մաշտոցի անվ. Մատենադարան (ՄՄ), ձեռ. № 2748, էջ 121ա—127բ։

¹⁰ Նույն տեղում, էջ 53—58։

¹¹ Գ. Հովսեփյան. Խաղբակյանը կամ Պողոսյանը Հայոց պատմության մեջ. մասն առաջին, Վարդաշապատ, 1928, էջ 190։ Աշխարհացոյց, էջ ԺԶ։

¹² Տե՛ս «Բանբեր Մատենադարանի», № 6, էջ 283—291։

¹³ Աշխարհացոյց, էջ 39, 54, 65, 69, 73։

սպասելի էր ավելին: Ուղղակի առնչություններ ունի ուրիշ մի քանի երկերի հետ, որոնց մասին խոսք կլինի իր տեղում: Իսկույն կեթ ասենք, որ դրանք ունեն ու միայն աղբյուրագիտական նշանակություն, այլ նպաստում են նաև բանասիրական հարցերի պարզաբանմանը:

Նկատի ունենալով, որ այսօր էլ շարունակում են գոյատևել և ճյուղավորվել վաղուց սկիզբ առած տարակարծությունները «Աշխարհացոյց»-ի մասնավորաբար բնագրական ընդգրկումների, հորինման ժամանակի և հեղինակային պատկանելության շուրջ, մենք քիչ մանրամասն կներկայացնենք այդ տարակարծությունները և հանգամանալից քննությամբ կջանանք գոհացուցիչ եզրակացության գալ:

«Աշխարհացոյց»-ի խորագրերում իբրև հեղինակ նշված է «Վարդան վարդապետ», որոշ դեպքերում նա բնութագրված է «նորոգ թարգմանիչ և երկրորդ լուսաւորիչ» խոսքերով, որոնք Վարդան անունով միջնադարյան գիտնական վարդապետներից սովորաբար ընծայվել են Վարդան Արևելցուն¹⁴: Ըստ այդմ, նա էլ ճանաչվում էր հեղինակ: Բայց և այնպես առարկությունները ծալր են տվել վաղ ժամանակներից և ստեղծել են լուծվելիք հարցերի մի ստվար փունջ:

Առաջին անգամ անուղղակի առարկություն է հայտնել Ղազար Զահեցին (XVII դար)՝ «Աշխարհացոյց»-ը վերագրելով մի անծանոթ «երկրորդ Վարդանի»¹⁵:

Մ. Զամչյանը այս առնչությամբ իր տարակուսանքը պատճառաբանում է հետևյալ կերպ. «Բայց հեղինակ նորին («Աշխարհացոյց»-ի) յեսոյ է քան զսու (իմա՝ Վարդան Արևելցին—Փ. Ա.) և քան զաշակերտ սորա զՅովհաննէս զԵղնկացին, զի ի ձեռագիր օրինակս բանք լինին անգ զԵղնկացոյն, մասնաւանգ, զի ողովհետեւ յայսպիսի գիրս յաւելեալ են օտարոտի բանք յանդգուլ անձանց, զժուադին լինի որոշել զհարապատ հեղինակ նոցին»¹⁶: Վաստակաշատ գիտնականը ճիշտ է նկատում փաստագրական իրողությունը, այն, որ «Աշխարհացոյց»-ի մեջ կան վկայություններ, որոնք վերաբերում են Վարդան Արևելցուց հետո ընկած ժամանակաշրջանին, կան հետագա ընդմիջարկություններ, որոնք զժվարություններ են ստեղծում երկի հորինման ժամանակն ու հեղինակը որոշելու խնդրում: Քանի որ այս տարակուսանքը ինչ-ինչ տարբերակներով բաժանում ու խորացնում են մի շարք այլ հետազոտողներ իսկ, կրկնությունից խուսափելու համար կպատասխանենք ըստ անհրաժեշտության իր տեղում:

Շարունակենք ծանոթանալ մյուս մասնագետների կարծիքներին:

Ֆրանսիացի անվանի հայագետ Ժ. Սեն-Մարտենը, որը «Աշխարհացոյց»-ի բնագիրն ու ֆոտանսետեն թարգմանությունը հրատարակել է զուգահեռաբար, իր առաջին ծանոթագրության մեջ գրում է. «Այս հարգալից հորոգչութունները (վերոգրյալ «նորոգ թարգմանիչ և երկրորդ լուսաւորիչ»—Փ. Ա.) ցույց են տալիս, որ հրատարակողներն ու գրիչները այս գործը Վարդան Բարձրբերդցի (շփոթում է. նկատի ունի Վարդան Արևելցուն—Փ. Ա.) վարդապետի պործ են համարել, որը XIII դարում շատ մեծ համբավ էր վայելում Հայաստանում և որը մահացել է 1271 թ.: Դժվար չէ անմիջապես նկատել, որ այս պիտքը չի կարող նրան վերագրվել, որովհետև այնտեղ, ուր հեղինակը նկարագրում է իրեւական մերձակա խորվիրոսայի եկեղեցին, խոսում է հռչակավոր Վարդանի (իմա՝ Արևելցու—Փ. Ա.) գերեզմանի մասին, որն այնպեղ է գտնվում», ապա, անմիջապես ավելացնում է. «Մենք կարծում ենք, որ այդ հեղինակը Վարդանի աշակերտներից մեկն է, և դրա համար է նրան վերագրված այս երկը: Այսպես ենք կարծում, որովհետև, երբ խոսում է Գալուծորի վանքի մասին, ուր պարել է Վարդան Բարձրբերդցին իր կյանքի վերջին տարիներին, այս վայրը կոչում է «վարժարան և աթոռ սրբոյ մերոյ վարդապետին», որը որոշակի չի

14 ՄՄ, ձեռ. № 1452, էջ 442ա, 4584, էջ 309բ: 2. Տ ա շ յ ա ն. Ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, Վիեննա, 1895, էջ 252:

15 Ղ ա զ ա Ր Զ ա հ կ ե ց ի. Գիրք աստուածաբանական, որ կոչի Դրախտ ցանկալի..., Կ. Պոլիս, 1735, էջ 638:

16 Մ. Զ ա մ շ յ ա ն. Պատմություն Հայոց. հ. Գ, Վենետիկ, 1784, էջ 242:

կարող պատշաճել այն նշանավոր անձին (իմա՝ Վարդան Արևելցուն—Փ. Ա.), ում մասին խոսում ենք»¹⁷:

Ղ. Ինճիճյանը, Մ. Մաղաթ-Թեոփիլյանցը, է. Դյուրորին, Մ. Ավգերյանը, Հ. Ոսկյանը հետևելով Մ. Չամչյանի և Ժ. Սեն-Մարտենի կարծիքներին, չեն բնորոշում Վարդան Արևելցու հեղինակ լինելը, «այլ Վարդան» են ենթադրում¹⁸:

Ղ. Ալիշանը գրեթե միևնույն պատճառաբանությամբ հեղինակ է ճանաչում ոմն «Վարդան աշխարհագիր»¹⁹: Գ. Զարբհանալյանը բավարարվում է նշելով՝ «Վարդանա (իմա՝ Արևելցու—Փ. Ա.) ընծայված»²⁰:

Հայերեն ձեռագրացուցակների հեղինակները, ելնելով «Աշխարհացոյց»-ի հեղինակային պատկանելության առնչությամբ խորագրերում արված ոչ շատ որոշակի վերադրումից, մեծ մասամբ իրենց վերաբերմունքը հայտնում են անվանացանկերում և «Վարդան վարդապետին» նույնացնում են Վարդան Արևելցու հետ, այսինքն՝ նրան են ճանաչում իբրև հեղինակ: Այսպես են վարվել, ասենք, Ն. Ֆինկն ու Լ. Գյանջեցյանը, Ֆ. Մակլերը, Հ. Աճառյանը և ուրիշներ²¹: Հ. Տաշյանը, ինչպես երևում է մի կտրուկ ականակից, հակված է դեպի Վարդան Բարձրբերդցին²²: Ն. Պողարյանը անվերապահ չէ²³, Հետաքրքիր է Բ. Մարգիսյանի նկատումը: Թեև համամիտ է Մ. Չամչյանի և Ժ. Սեն-Մարտենի կարծիքներին, բայց նաև հստակ կոհանում է, որ նրանց առաջադրած փաստարկումներին հիմք ծառայած վկայությունները կարող են նույնպես հետազա ընդմիջարկություններ լինել. «...կամ տեղիս եկամուտ հավելված է, և կամ Մեծին Վարդանի Աշխարհագրությունն ևս, ինչպես խորենացվույն, ետքեն փոփոխություններ կրած է»²⁴:

Գ. Հովսեփյանը, թեև նշմարել է Վարդան Արևելցուն «Աշխարհացոյց»-ի հեղինակ լինելը մերժող մասնագետների փաստարկումների հիմքերը, նույնիսկ մեջ է բերել դրանցից նրա խորվիրապում թաղված լինելու վերաբերյալ վկայությունը, այդուհանդերձ նրան է հեղինակ ճանաչում. «Բայց որը (Աշխարհացոյց)»-ը—Փ. Ա.) ԺԴ դարու կնիք կամ հավելումներ է կրում», «ԺԴ դարի կեսերից առաջ խմբագրված կամ հավելումներով ձեռագրած է»²⁵:

¹⁷ J. Saint-Martin. Op. cit., p. 455.

¹⁸ Ղ. Ինճիճյան. Ստորոգութիւն..., էջ 7, 8, 137, 138 և հտ.: Ն ու յ ն ի՝ Հնախօսութիւն..., հ. Ա, էջ 33, 80, 123, 127 և հտ., նաև սույն աշխատության Բ և Գ հատորների բաղմամբիվ էջերում: Մ. Թեոփիլյանց. Վարք երևելի արանց. հ. Բ, Վենետիկ, 1839, էջ 582: Extrait de la Chronique de Michel le Syrien, Traduit par Ed. Dulaurier. Paris, 1849, pp. 90, 91. Բ. Սարգիսյան. նշվ. աշխ., հ. Բ, էջ 809—810: Հ. Ոսկյան. Վարդան Արևելցի.—«Հանդես ամսօրյա», 1921, էջ 567—568: Ն ու յ ն ի՝ Հովհաննես Վանական և յուր զպրոցը, Վիեննա, 1922, էջ 82:

¹⁹ Ղ. Ալիշան. Այրարատ. Վենետիկ, 1890, էջ 438: Ն ու յ ն ի՝ Սիսական. Վենետիկ, 1893, էջ 130:

²⁰ Գ. Զարբհանալյան. Պատմություն հայերեն զպրոթյանց. Վենետիկ, 1897, էջ 140:

²¹ F. N. Fink und L. Gjandschelian. Verzeichnis der armenischen Handschriften der Königlichen Universitäts Bibliothek zu Tübingen. Tübingen, 1907, SS. 148, 157, 166, 172, 263; F. MacIer. Catalogue des manuscrits arméniens et géorgiens de la Bibliothèque Nationale. Paris, 1908, pp. 80, 202; Հ. Աճառյան. Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Թավրիզի. Վիեննա, 1910, էջ 30, 153: Սաֆյան մի այլ տեղ գրում է. «Վարդան Վարդապետ. ունի Աշխարհագրություն (պետք չէ միացնել Վարդան Պատմիչի հետ...)», Հայոց անձնանունների բառարան. հ. Ե, Երևան, 1962, էջ 91:

²² Հ. Տաշյան. նշվ. աշխ., էջ 201, 1155:

²³ Ն. Պողարյան. Մայր ցուցակ ձեռագրաց Ս. Հակոբյանց. հ. 9, Երուսաղեմ, 1970, էջ 506: Ն ու յ ն ի՝ Հայ գրողներ. Երուսաղեմ, 1971, էջ 299:

²⁴ Բ. Սարգիսյան. նշվ. աշխ., էջ 810:

²⁵ Գ. Հովսեփյան. նշվ. աշխ., մասն երկրորդ, Երուսաղեմ, 1944, էջ 44, 190:

Մ. Աբեղյանը հեղինակ է ընդունում «Վարդան աշխարհագրին», որովհետև «Աշխարհացոյց»-ը ավելի ուշ ժամանակի գործ է»²⁵:

Ուշադրության արժանի նոր փաստարկներ է առաջադրել Ա. Հովհաննիսյանը: Նկատելով, որ «Աշխարհացոյց»-ի մեջ Սամարղանդը հորջորջվում է «Աթոռն նետողաց ազգին», Մոսկվան՝ «աթոռ է՝ ազգին ըոռուաց», իսկ Կ. Պոլիսը՝ «մարաբաղաքն յունաց», և հաշվի առնելով, որ Սամարղանդը կարող էր առկա լինել միայն 1370 թ. հետո, ևսնկ Քամուրի ժամանակ, Մոսկվան՝ Կուլիկովյան ճակատամարտից (1389 թ.) հետո, Կ. Պոլիսը՝ 1453 թ. առաջ, նախքան Բուրքերն այն կգրավեին, եզրակացնում է, որ «Աշխարհացոյց»-ը շարադրված պետք է լինի 1370—1453 թթ. միջոցին²⁷: Պարզ է, որ Վարդան Արևելցին, մեռած լինելով 1271 թ., չի կարող հեղինակ համարվել:

Չհաշված այլ մի քանի հեղինակների²⁸ մանր նշմարները, այսպիսին էին «Աշխարհացոյց»-ի բնագրական վիճակի, հորինման ժամանակի և հեղինակային պատկանելության մասին հայագիտության մեջ տարածված կարծիքները, երբ 1960 թ. ֆրանսահայ հայագետ Հայկ Պերպերյանը ձեռնամուխ է լինում քննական բնագրի վերոհիշյալ հրատարակության: Նրա հետազոտական ջանքերի շնորհիվ մի անգամ ևս հաստատվում է, որ «Աշխարհացոյց»-ը, իրոք, երկու՝ համառոտ և ընդարձակ խմբագրությամբ է մեղ հասել, համառոտն իսկ զերծ չէ հետագա ընդմիջարկություններից, թեև անհամեմատ ավելի քիչ: Մասնավոր կարևոր էր բնագրական այն էական հաստատումը, ըստ որի անտառակույս հետագա ընդմիջարկություններ են և միայն ընդարձակ խմբագրության մեջ են պատահում բանասերների կողմից վկայակոչված այն հիմք-վկայությունները, որոնք, ըստ նրանց, անհնարին էին դարձնում «Աշխարհացոյց»-ի հորինումը ղենկ XIII դարում, մինչև Վարդան Արևելցու մահը՝ 1271 թ., հետևաբար և՛ նրան հեղինակ ճանաչելը: Այսպիսով, իբրև ավելի ուշ ժամանակների, ոչ հեղինակային ընդմիջարկություններ, հետագա քննությունից դուրս են մղվում Վարդան Արևելցու, խաչատուր Կելառեցու գերեզմանների տեղի նշման, Սամարղանդի, Մոսկվայի, Կ. Պոլսի վերաբերյալ մեզ արդեն հայտնի նրանց արժարժած վկայությունները: Բայց դեռ մնում են Հովհաննես Երզնկացու և Գլաձորի համայնարանի մասին տեղեկությունները, որոնք նույնպես նրանց համար ամուր հիմք են ծառայել: Դրանց մենք ևս կարող ենք մեկ-երկուսն ավելացնել: Այնպես որ, թեև Հ. Պերպերյանի հաստատումները, անտառակույս, օգտակար եղան, բայց չստեղծեցին կայուն տեսակետ «Աշխարհացոյց»-ի ոչ հորինման ժամանակի, ոչ էլ հեղինակային պատկանելության մասին: Տարակարծությունները շարունակվեցին:

Այսպես, Մ. Հովհաննիսյանը այնուհետև էլ շարունակում է շնույնացնել «Վարդան աշխարհագիրն» ու «Վարդան պատմիչը», որ Արևելցին է, հետևաբար, ըստ նրա վերջինս «Աշխարհացոյց»-ի հեղինակ չէ²⁹:

Ս. Երեմյանը Հայկական սովետական հանրագիտարանի համար գրած իր հոգվածում հայտնում է. «Մեղ է հասել XIII դ. «Աշխարհացոյց»-ը Վարդան Արևելցու անունով, որը գուրկ է քարտեզագրական տարրերից...»: Ուստի ժամանակը, ճիշտ է, XIII դարն է, բայց հեղինակը՝ ոչ անպայման Վարդան Արևելցին, թեև նախապես «Հալաբումն պատմութեան» հեղինակ Վարդան Առե-

25 Ն. Աբեղյան. Հայոց հին գրականության պատմություն.— Երևան, Դ, Երևան, 1970, էջ 241:

27 Ա. Հովհաննիսյան. Դրվագներ հայ աղատագրական մտքի պատմության. Ա, Երևան, 1957, էջ 162:

28 Մ. Ավդալբեգյան. խաչատուր Կելառեցի. Երևան, 1958, էջ 20—21: Թ. Հակոբյան. Հայաստանի պատմական աշխարհագրություն. Երևան, 1968, էջ 213: Նույնի՝ Հայաստանի պատմական աշխարհագրություն. պրակ II, Երևան, 1952, էջ 22:

29 Մ. Հովհաննիսյան. Հայաստանի բերգերը. Վենետիկ, 1970, էջ 9, 15, 88, 99 և հտ.:

վեցուն և «Աշխարհացոյց»-ի հեղինակ Վարդանին նույնացրել է³⁰։ Ավելի անորոշ կարծիքի է Լ. Խաչերյանը³¹։

Քանիցս անդրադառնալով «Աշխարհացոյց»-ին, Ա. Աբրահամյանը տարբեր տեսակետներ է հայտնել 1959 թ. հրատարակված իր մի աշխատության մեջ նա Վարդան Արևելցուն է հեղինակ ճանաչում, սակայն ավելի հետո գրում է. «Մենք սկզբում այն կարծիքն ունեինք, որ Վարդանի «Աշխարհացոյցում» Գլաձորի համալսարանի վերաբերյալ հատվածն ընդմիջարկություն է ուղղաբերի, սակայն ուսումնասիրելով այդ բնագրի բոլոր ընդօրինակությունները համոզվեցինք, որ այդ հատվածը ընդմիջարկություն համարել չի կարելի, ուստի եկանք այն համոզման, որ «Աշխարհացոյց»-ի հեղինակը պիտի լինի Վարդան Բարձրբերդյին, որը Գլաձորի համալսարանի սաներից է»³²։

Վերջապես, Ա. Մաթևոսյանը, Գլաձորի համալսարանի վերաբերյալ վերակայությունը ընդմիջարկություն համարելով (թեև առանց պատճառաբանությունների), ընդունում է, որ Վարդան Արևելցին է «Աշխարհացոյց»-ի հեղինակը³³։

Ահա, այսպիսին է առ այսօր «Աշխարհացոյց»-ի հետ կապված բնագրագիտական, բանասիրական հետաքրքրությունների վիճակը, որը, ինչպես դժվար չէ եզրակացնել, դեռևս հստակ չէ։ Մենք այն հանգամանորեն ներկայացրինք, որպեսզի հարցերը ավելի որոշակի և ամբողջական երևան, քանի որ հարթվելիք դժվարություններ դեռ կան, որոնք օբյեկտիվ լուրջ պատճառներ են, և, դժբախտաբար, ձեռագրական-փաստագրական նյութի վերջնական պարզաբանումների համար դյուրություններ չի ընձեռում։

Այդ մնացած դժվարությունները բխում են Հովհաննես Երզնկացու և Գլաձորի համալսարանի մասին «Աշխարհացոյց»-ում եղած վկայություններից, որոնք, իրավամբ, նշված տարակույսն են հարուցել հետազոտողների մոտ։

Բայց և կան այլ վկայություններ, որոնք նույնպես նման տարակարծությունների տեղիք են տալիս։ Դրանք չեն հրապարակված։ Խուսափելու համար հետագա վիճաբանությունը բարդություններից, որոնք կարող են գուանալ դրանց նոր արժանաբան, համառոտակի անդրադառնանք դրանց ևս։

Օրինակ. որոշ ձեռագրերում, այդ թվում նաև Մաշտոցի անվան Մատենադարանի № 2748 ձեռագրում, որը ներկայացնում է նաև համառոտ խմբագրության բնագիրը, գրված է. «...և անդ է գերեզման Աղբերկան որդուն Աստուածատուր վարդապետին, և Մխիթար վարդապետին և Ոսպնակեր (Հովհաննես) վարդապետին. ի ներքին վանքն է»³⁴։ Այս երեք անձնավորություններն էլ մահացել են վարդան Արևելցուց հետո. առաջինը՝ XIII դարի վերջերին, երկրորդը՝ 1337 թ., իսկ երրորդը՝ 1327 թ.³⁵։ Եթե այս վկայությունը պատկանի հեղինակային սկզբնագրին, ուրեմն «Աշխարհացոյց»-ը գրված պիտի համարել միայն 1340-ական թթ. հետո, և բնական է, Վարդան Արևելցու հեղինակ լինելու մասին ավելորդ կլինեն մտածելը։ Բայց եթե այն հեղինակային լինեք, պիտի ընթերցվեր բոլոր, հատկապես հնագույն ձեռագրերում, սակայն այդպես չէ³⁶։

30 Հայկական սովետական հանրագիտարան (ՀՍՀ)։ Գ. Ա., 1974, էջ 484։ Նույնի՝ Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 151։

31 Վարդան՝ Արևելցի. Մեկնություն քերականի, աշխատասիրություն Լ. Խաչերյանի. Երևան, 1972, էջ 7։

32 Ա. Աբրահամյան. Մատենադարանի ձեռագրական գանձերը. Երևան, 1959, էջ 69։ Նույնի՝ Գլաձորի համալսարանի տեղը և հիմնադրության տարեթիվը. — «Պատմա-բանասիրական հանդես», 1982, № 1, էջ 172։ Նույնի՝ Գլաձոր՝ «Աթենք պանծալի». — «Գարուն», 1978, № 9, էջ 84։

33 Ա. Մաթևոսյան. Հիրավի, ե՞րբ և որտե՞ղ է հիմնադրվել Գլաձորի համալսարանը. — «Գարուն», 1980, № 7, էջ 56։

34 ՄՄ, ձեռ. № 2748, էջ 123բ։

35 Հ. Աճառյան. Հայոց անձնանունների բառարան. Ա., Երևան, 1942, էջ 236. Գ. Երեվան, 1946, էջ 381, 613։ Ն. Սարգիսյան. Տեղագրությունք ի Փոքր և ի Մեծ Հայս. Վենետիկ, 1864, էջ 268։

36 Աշխարհացոյց, էջ 18։

Ավելին, ձեռագրերում այն միշտ նշված ամբողջական տեսքով հանդես չի գալիս. եթե Աղբերկան Որդին հիշվում է ԱԲԴ, Ոսպնակերը՝ ԱԲԳ, ապա Մխիթարը՝ միայն Ա ձեռագրում: Ուստի պարզ է, որ հեղինակային չէ, ընդմիջարկում է ամբողջությամբ:

Ձեռագրերում շատ անգամ կարելի է հանդիպել նաև հետևյալ իրողությանը. որոշ տեղանունների մասին գրելիս լրացուցիչ նշվում է «որ այժմ կոչի» կամ «որ այժմ ասի»: Օրինակ. «Որդբադ, որ այժմ ասի Օրդվար», «Թաւրէզ... վասնորոյ Հուլաու թախտ կոչի այժմ», «Կորձեաց... որ այժմ Կորձէք ասի անուն», «Կեսարիա... որ այժմ՝ Ղալսարի»...³⁷: Այսօրինակ լրացումների դոնե մի կարևոր մասը Վարդան Արեւելցու մահվանից հետո ընկած ժամանակի անվանումներ են: Թվում է, որպեսզի Թավոհր հայտնի դառնար իբրև «Հուլաու թախտ» նրա մահվանից հետո (1265 թ.) նաև Հայաստանում, պիտի բավական ժամանակ անցներ: Կեսարիայի «Ղալսարի» արտասանությունը ավելի ուշ ժամանակ է հուշում, քան XIII դարը:

Մեր կարծիքով, հիշյալ դեպքում էլ ստույգն այն է, որ այս ևս հետագա ընդմիջարկություն է, և մեղ հուզող հարցերի առնչությամբ ունի ավելի կողմնակի նշանակություն:

«Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրության բնագրի բովանդակության ժամանակագրական վերջին սահմանը XIII դարն է: Այդ մասին կասկած չունի նաև ակադեմիկոս Ս. Նրեմյանը³⁸: Այնտեղ առկա ավելի ուշ ժամանակի վերաբերյալ տեղեկությունները հասուկենտ են. դրա համար էլ շուտ են նկատվել և հրապարակ բերվել: Ակներև է, որ հեղինակային ծրագրի մաս չեն կազմել, այլպես դրանց թիվը կլիներ ավելի շատ:

Բացի այդ, դրանք առկա են ոչ բոլոր ձեռագրերում և ակնհայտ է, որ մասամբ ասված են իբրև լրացում այս կամ այն նախապես նշված տեղանվան համար, շատ հավանական է (գոնե մեծ մասամբ) ընդօրինակող գրիչների կողմից, որոնք ցանկացել են տվյալ տեղանվան նաև իրենց ժամանակի արտասանությունը մեջ բերել: Ըստ այսմ, միանգամայն հավանական է, որ նաև «որ այժմ ասի»-ով հյուսված լրացումները, գեթ մեծ մասով, հեղինակային չեն, հետագա ընդմիջարկություններ են և, իբրև այդպիսիք, տարակուս չեն հարուցում ու դուրս են մնում հետագա քննարկումից:

Մնաց միայն Գլաձորի համալսարանի և Հովհաննես Երզնկացու մասին եղած վկայությունների ժամանակագրական «անհարիրության» հարցը: Դրանք ընթերցվում են բոլոր խմբագրություններում ու ձեռագրերում: Այս հանգամանքը, ինչ խոսք, ավելի է ընդգծում դրանց նշանակությունը առաջադրված հարցերի պարզաբանման համար: Ուրեմն, հեղինակային են, թե հետագա ընդմիջարկություն:

Ցավոք, այսօրվա դրությամբ այս հարցին վերջնական պատասխան չի կարելի տալ: Ձեռագրերը այդ հնարավորությունը չեն ընձեռում: Բայց և այնպես դոնց հանգամանալից ուսումնասիրությունից, կարծում ենք գոհացուցիչ եզրակացության կարելի է գալ:

Այսպես. գիտենք, որ այս երկու վկայություններն էլ կան բոլոր, այդ թվում նաև Ե և Ձ ձեռագրերում, որոնք «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրության մեղ հասած բնագրի հնագույն վիճակն են ներկայացնում³⁹, րստ այդմ հեղինակային բնագրին եղածներից ամենամոտիկն են: Որ հեղինակային կարող են չլինել, մենք կտեսնենք ստորև, բայց այնքանով որ Ե և Ձ ձեռա-

³⁷ Նույն տեղում, էջ 15, 16, 19, 23: Նշվածներից առաջինը և երկրորդը չկան Ե, Ձ, երրորդը՝ Բ, Ե, Ձ, չորրորդը՝ Բ, Գ, Դ, Ե, Ձ ձեռագրերում: Տե՛ս վերը նշված էջերը: Ա, Բ, Գ, Դ, Ե և Ձ տառերով ենք ձեռագրերը նշում ըստ Հ. Պերպերյանի հրատարակության, հետագա համեմատությունները դիտարկելու համար: Ըստ որում Ա, Գ, Դ-ն համապատասխանաբար ներկայացնում են Վենետիկի Մխիթարյան միաբանության մատենադարանի № 968, 350, 780, իսկ Բ, Ե, Ձ-ն՝ Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց մատենադարանի № 1138, 642, 1529 ձեռագրերը:

³⁸ ՀՍՀ. հ. Ա, էջ 484:

³⁹ Աշխարհացոյց, էջ ԺԶ, ԻԳ, ԻԹ, 15, 22 (այսուհետև էջերը կնշվեն տողամիջում):

գրերը նկատելիորեն տարբերվում են և՛ համառոտ խմբագրության մյուս ձեռագրերից, և՛ իրարից (էջ ԺԶ) ինքնին այդ է հաստատում, այսինքն՝ եթե գրաւոր հեղինակային բնագիրը լինեին, գոնե իրար նկատմամբ այդքան տարբերություն պիտի չունենային:

Օրինակ. հետևյալ հատվածում ակնհայտ է համառոտ խմբագրության մյուս ձեռագրերի համեմատությամբ դրանց տարբերությունը. «Իսկ աշխարհն Պարսից խորասան, որ ասի արեւելք, մեծ քաղաքն էր և Մաշտ, ուր առաքեալն Քրիստոսի տաւալ զպատկերն մօրն, և (ԱԳԴ)⁴⁰ նուշաւոր քաղաքն, ուր աթոռն է Պարսից թագաւորացն, ուր սուրբ Ղևոնդեանքն նահատակեցան, Սամարղանդ և Բուխարա և մեծ լեւոն Սրբանդէլ, ուր պատուական ակունքն լինին, և (Ա, ԳԴ) Բալխ և Բատաշխան ասեն (Ա), ուստի գեղեցիկ լաճվարդն ելանէ, զոր առին աղզն Առշակունեաց և Պահլաւունիք կոչեցան: Կուրան և Բագարան ի խորին խորասան է: Եւաղ և Քաշուն, և Քիրման, Շիրազ և Կարսսուն, այս Քուշացոց երկիրն է (ԱԳԴ), Մազընդարան և Շիրազ է (Ե, Զ), Շօշ քաղաքն Իսպահան է, ուր Դանիէլ մարգարոն զտեսիլն ետես՝ եկեալ ընդ Կուրոյ թագաւորին Պարսից. Ղազպին և Սաւա և Նարդըստան, Ջանգիան և Համաղան և Սուլթանիա (ԱԳԴ) (էջ 51):

Կարելի է և այլ օրինակներ վկայակոչել: Դիտել տանք, որ նշված հատվածում միայն Ե և Զ ձեռագրերը ունեն լրացուցիչ «Մազընդարան և Շիրազ է» հավելումը, այն դեպքում, երբ հատվածին անմիջապես հաջորդող երկրորդ սողում դարձյալ Ե և Զ ձեռագրերը (նաև՝ մյուսները) ունեն թվարկված Մազընդարան նույն տեղանունը: Կողք-կողքի այս զուգ սոսկական թվարկումը հեղինակին վերագրելը անիմաստ կլիներ. «Մազընդարան և Շիրազ է»-ն անկասկած, հետագա լրացում է և ուղագրով է, որ պահպանվել է միայն Ե և Զ ձեռագրերում:

Այսպես նաև հետևյալը. «Ուտի ի մտից Եռասխոյ, ի մէջ Առցախայ և Կուր գետոյ, որ է Քուռ...» (էջ 10—11): Այս «որ է Քուռ...» անհարկի լրացումը, որ առկա է նաև Ե և Զ ձեռագրերում, անկարելի է հեղինակային համարել. հետագա պարզունակ ընդմիջարկություն լինելը ակնհայտ է:

«Բիւղանդիոն Ըստրմալօլ է... Քրիստոս աստուած» (էջ 61—62) հատվածում պարզ երևում է, թե Ե և Զ ձեռագրերը նաև իրար նկատմամբ ինչքան տարբերություններ ունեն: Մի այլ օրինակ. «Արծրունիք Սասուն է, զոր շինեաց Սանասար՝ որդի Սենեքարիմայ, որ փախուցեալ էին ի Նինուէլու (Զ)» (էջ 20—21): Ինչպես տեսնում ենք, ընդգծվածը Զ ձեռագրում կա, Ե-ում՝ ոչ:

Այլուր կադրում ենք. «Եւ գետն Եփրատ յեկեղեաց գաւառին է, այլ այլ ելմաւիտ Եփրատ (ԵԶ)» (էջ 23): Կամ՝ «Ասիա Եփեսոս է իւր թեմովն, որ վիճակն է Յովհաննու աստուածաբան» (նաև՝ ԵԶ) անտարանչին» (էջ 62): Ինչպես և՛ «Աղեքսանդրիա, որ է Լսկանդարիա» (նաև՝ ԵԶ) (էջ 62): Այստեղ էլ ընդգծվածները, որոնք առկա են միայն Ե և Զ ձեռագրերում, տարբերակող լրացումներ են՝ ընդմիջարկված ավելի ուշ, բնական է, ոչ հեղինակի կողմից: Հեղինակը հազիվ թե նման լրացումների անհրաժեշտությունը տեսներ, իսկ եթե տեսել էր, ապա դրանք, իբրև հիմք-բնագրի խոսք, պիտի լինեին բոլոր ձեռագրերում, բայց չկան:

Մի այլ տեղ գրված է. «Կիլիկէ, որ է Սիս... և զմայրաքաղաքս ունի ԳՏարսուս, որ է Սիս» (ԳԴԵԶ) (էջ 24): Կարող է նույն անձը այսպիսի շփոթ-կրկնություն թույլ տալ միևնույն պարբերության մեջ, կամ Տարսուսն ու Սիսը, որոնք տարբեր քաղաքներ են, նույնացնել ու միաժամանակյա մայրաքաղաք ճանաչել: Իհարկե ոչ: «Որ է Սիս»-ը, որ առկա է նաև Ե և Զ ձեռագրերում, անկասկած հետագա ընդմիջարկություն է:

Կարող ենք շարունակել, բայց կարծում ենք այսքանը միանգամայն բավարար է համոզվելու համար, որ «Աշխարհացոյց»-ի անգամ Ե և Զ ձեռագրերում պահպանված համառոտ խմբագրության բնագիրը ևս, անտարակույս,

40 Ընդգծվածները այն տարբերություններն են, որոնք առկա են միայն փակագծում նշված (ԱԳԴ և Զ) ձեռագրերում:

անաղարտ չի մնացել, կրել է փոփոխություններ և ընդմիջարկություններ է ընդունել. ուրեմն, ոչ հիմնովին է հեղինակային:

Բնական է, այդ ընդմիջարկությունների շարքում պիտի առաջին հերթին դասել այն, որ ժամանակագրականորեն ավելի ուշ շրջանի է վերաբերում: Արդեն գիտենք, որ «Աշխարհացոյց»-ի նախնական, համառոտ խմբագրության բնագիրը XIII դարից է: Այդպես է մանավանդ Ե և Ձ ձեռագրերում պահպանվածը: Միայն Գլաձորի համալսարանի և Հովհաննես Երզնկացու մասին եղած վկայությունները ժամանակագրական անհադիտություն են ստեղծում, որովհետև XIV դարից են գալիս և իրապես հետագա ընդմիջարկություններ են:

Այս առնությունամբ լրացուցիչ կարելի է ասել նաև հետևյալը.

ա) Եթե Գլաձորի մասին ասվածը հեղինակային խոսք լիներ, ապա այստեղ էլ, ինչպես ամենուրեք է, հազիվ թե չհիշատակվեր նրա հռչակավոր բաբունապետը՝ Եսայի Նեցին ևս:

բ) Եթե Հովհաննես Երզնկացու մասին հիշատակությունը հեղինակի ծրագրի մեջ էր մտել, ապա՝ ինչպես նրա ժամանակ ապրած այլ, նույնպիսի հռչակավոր գիտնական-վարդապետներին և մշակութային գործիչներին էլ չի ընդգրկել (վարդան Արևելցու մասին, ինչպես տեսանք, վկայվել է միայն ընդարձակ խմբագրության մեջ):

Սա մեր կողմից պահանջ է, բայց «Աշխարհացոյց»-ի բովանդակության ընդգրկած սահմանները նման հարցադրումը դարձնում են միանգամայն օրինական. ինչու չի նշել:

գ) Կարծում ենք, որ «Աշխարհացոյց»-ը շարադրվել է 1269—1271 թթ. միջոցին: Նման եզրակացության ենք եկել համառոտ խմբագրության բոլոր ձեռագրերում էլ առկա հետևյալ հիշատակության հիման վրա. «Եսկի կողմն արևելից ի հիսիսոյ Չինումաշին աշխարհն մօտ ի Բուլղարսն է, ուստի ելին աղզն թաթարաց՝ Չանկզխանին, որդին՝ Հոգթա(ղա) խանն, Հուլաու խանն՝ որդի Հոգթաղա խանին, Հուլաու խանին որդի՝ Աբաղա խանն, որ նստէր ի դաշտն Նպատական...» (էջ 70): Հաջորդը՝ Թագուղա խանը՝ չկա, հիշատակված խաներից վերջինը Աբաղա խանն է: Նա 1282 թ. արդեն սպանվել էր: Եթե «Աշխարհացոյց»-ի հեղինակը գիտենար նրա մահվան և հաջորդի՝ Թագուղա խանի մահին, լուր չէր մնա: Վերագրյալ հիշատակության տրամաբանական ընթացքը այդ է թելադրում: Ուրեմն՝ չգիտի, և այս հիշատակությունը արված է անպայման Աբաղա խանի մահվանից 1282 թ. առաջ:

Ուշադրություն դարձնելով այնտեղ նշված «Աբաղա խանն, որ նստէր ի դաշտն Նպատական» տեղեկության վրա, պարզել ենք հետևյալը. մինչև 1269 թ. այս դաշտը եղել է նրա բանակատեղին: Այդ կամ հաջորդ՝ 1270 թ. նա մեկնել է այդտեղից խոռոսան՝ Բողախի դեմ կռվելու համար: Միայն 1277 թ. գալիս է Փորո Ասիա: Նույն թվականին կռվում է Ոսկե հողայի, 1281-ին՝ Եգիպտոսի դեմ: 1282 թ. սպանվում է Համադանում⁴¹: Հետևաբար, վերագրյալ հիշատակությունը մինչև 1269—1270 թթ. Նպատական դաշտում նրա մնալու: մասին է: Այս ասվել է 1265 թ. հետո, որովհետև Աբաղա խանը հաջորդել է այդ թվականին մեռած Հուլավու խանին⁴², 1269-ին մեկնել էր այդ դաշտից և կարելի էր ասել «որ նստէր...»: Դրանից հետո նրա մասին ոչինչ չի ասում և չի ակնարկում անդամ: Ուստի, շատ հավանական է, որ այդ կամ դրան մերձավոր մի ժամանակի (1269—1271 թթ.) ասված խոսք է այս հիշատակությունը. մանավանդ եթե նկատի ունենանք, որ քիչ հետո քննարկվող մի շարք փաստեր գրեթե աներկբայելի են դարձնում վարդան Արևելցու հեղինակ լինելը, ապա միանգամայն համոզիչ կդառնա մեր սույն հետևությունը: Ըստ այսմ, կարելի է ասել, որ «Աշխարհացոյց»-ը հորինվել է 1269 կամ ամենաուշը՝ 1271 թ.:

Այսքանից հետո դժվար չի լինի նկատել, որ Գլաձորի համալսարանի և

⁴¹ Հ. Մ ան ան դյ ան. Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության. հ. Գ, Երևան, 1977, էջ 308—313:

⁴² Հայ ժողովրդի պատմություն. հ. 3, Երևան, 1976, էջ 634:

Հովհաննէս Երզնկացու մասին եղած վկայութիւնները հեղինակային խոսք չեն, այլ ավելի ուշ, XIV դարում կատարված ընդմիջարկութիւններ են և չեն կարող Վարդան Արեւելցու հեղինակ լինելը մերժելու հիմք ծառայել: Բայց իրոք նա է հեղինակը:

Ինչպես նշել ենք, հայագետների մի մասը նրան է ճանաչում իբրև «Աշխարհացոյց»-ի հեղինակ: Դժբախտաբար, քչերն են բանասիրորեն պատճառաբանել իրենց դիրքորոշումը: Այս իմաստով միանգամայն բավարար կլինի ծանոթանալ Հ. Պերպերյանի փաստարկներին, որոնք լիովին ներկայացնում են այս առնչությամբ հայագիտության մեջ առ այսօր շրջանառության դրված տվյալները ի նպաստ Վարդան Արեւելցու հեղինակ լինելուն:

Դրանք, ըստ էության, երեքն են:

ա) «Աշխարհացոյց»-ի և Վարդան Արեւելցու «Հաւաքումն Պատմութեան» միջև ընդհանրություն կա: «...Ինչպես Նորայր Բյուզանդացի դիտել սփած է,— գրում է Պերպերյանը,— Վարդանի պատմությունը և Աշխարհացոյցը կսկսին գրեթե բոլորովին համանման նախադասությամբ մը, և ուրիշ տեղեր ալ կը դառնան այս երկու գործերուն միջև ինչ-ինչ տեղեկությանց նմանություններ»: Եվ անմիջապես ավելացնում է. «Անշուշտ այս պարագաները վճռական փաստեր չեն կրնար կազմել, որովհետև ուրիշ Վարդան մը կրնա օգտված ըլլալ Վարդան Արեւելցիին պատմութենէն»:

բ) «Աշխարհացոյց»-ի բնագրի համառոտ խմբագրության հնագույն տարբերակը (Ե և Ձ ձեռագրեր) որևէ տեղեկություն չունի Վարդան Արեւելցու մահվան 1271 թ. հետո ընկած ժամանակաշրջանից. «...ներկա աշխատության մեջ օգտագործված հնագույն ձեռագրերն են (Ե և Ձ) չունին տեղեկություն մը, որ Վարդան Արեւելցիին մահէն հետնագույն ժամանակի մը վերաբերի» (Թեև տեսանք, որ ունեն Գլածորի և Հովհաննէս Երզնկացու մասին, բայց հետագա ընդմիջարկություն են):

գ) Ձեռագրական ավանդույթը «Աշխարհացոյց»-ը վերագրում է Վարդան Արեւելցուն. «Քանի որ ձեռագրական ավանդությունը Աշխարհացոյցին հեղինակ կճանչնա «նորոգ թարգմանիչ և երկրորդ լուսաւորիչ» Վարդան վարդապետ մը, որ միայն Վարդան Արեւելցիին կրնա ըլլալ և ոչ ուրիշ Վարդան մը, պատճառ չկա Աշխարհացոյցը չվերագրելու պատմագիր-աստվածաբան և ուսուցիչ նույն Վարդանին, մինչև որ հակառակ փաստեր կարելի ըլլա անառարկելի ապացույցներով» (էջ ԻԶ):

Մենք համաձայն ենք եղել և այժմ էլ համաձայն ենք, որ սույն փաստարկները հաստատում են Վարդան Արեւելցու հեղինակային իրավունքները: Հայագիտության մեջ բանավեճերի փորձը ցույց է տալիս, որ ձեռագրական-մատենագրական ավանդական վերագրումներին դեմ դուրս գալը սակավ դեպքերում է միայն արդարացիված: Այս անգամ էլ, մեր կարծիքով, առարկելը դժուրին չէ, որովհետև հայ մատենագրության դիտակներին հայտնի է, որ վերոգրյալ դրվատալից տիտղոսները գրեթե միշտ շուրջվել են միայն Վարդան Արեւելցուն՝ այդ ժամանակաշրջանի (XII—XIV դդ.) բոլոր Վարդաններից:

Ե և Ձ ձեռագրերի մասին այստեղ ասվածը և մեր մանրամասն դիտողությունները, կարծում ենք, համոզիչ են դարձնում այն կարևոր փաստը, որ «Աշխարհացոյց»-ի՝ նրանց մեջ պահպանված հնագույն բնագիրը XIII դարից է, 1271 թ. այս կողմ ընկած ժամանակի վերաբերյալ հաղորդում չունի, XIV դարի առաջին կեսից եղած մեկ-երկուսը (Գլածորի և Հ. Երզնկացու մասին), անտարակույս, հետագա ընդմիջարկություններ են: Իրոք, այդ բնագիրը Վարդան Արեւելցու հեղինակային իրավասությունից դուրս հանելու առիթ չկա:

Որքան էլ «վճռական» չլիք, բայց, անկասկած, կարևոր փաստ է, որ «Աշխարհացոյց»-ի և հենց Վարդան Արեւելցու «Հաւաքումն պատմութեան» միջև բնագրական-փաստագրական, ինչպես նաև տեղանունների նույնական անվանումների նմանություններ կան: Ի վերջո, բոլորովին էլ պատահականու-

թյունն է, որ նշված երկու բնագրերի սկզբնատողերը նույնական են⁴³։ Երրորդ կրկնակր այլուստ՝ մեզ հայտնի է⁴⁴։

Այստեղ կարելի է ավելացնել նաև մեր նկատած ընդհանրություններից մի քանիսը։

«Աշխարհացոյց»

Արդ, ինքն աստուած անպատճառ է և ինքն է բնութեամբ բարի... Ոչ կամեցաւ ինքն միայն վայելել զիւր առատ բարին, այլ շարժեալ սիրով յիւր բարի կամացն և գոյացոյց զարարածս... (էջ 2—3)

...Դերջան և Բալու, ուր զգիրն եգիտ Մեսրոպ վարդապետն... (էջ 22)

Եթե մանավանդ նկատի ունենանք, որ «Աշխարհացոյց»-ի նման ընդհանրությունները միայն «Հաւաքումն պատմութեան» հետ չեն, այլ վարդան Արեւելացու մյուս մի քանի երկերի հետ ևս, ինչպես այժմ կտեսնենք, ապա կարող ենք ավելի համոզված լինել, որ իբրև հեղինակ հանդես է գալիս միևնույն անձը՝ վարդան Արեւելցին։

Ինչպես.

«Աշխարհացոյց...»

«...զի թէպէտ արարածքս պատճառ լինին զիտութեան արարչին, զի յարարածոց ճանաչի արարիչն... զի արարածովքս ճանաչեն զարարիչն...» (էջ 2)

«Աշխարհացոյց...»

«Եւ զերկիր, զի անշարժ կա, այլապէս արար աստուած, զի մի աստուած կարծիս տացէ...» (էջ 4)

«Եւ ապա Քեռինոս կղզին, զի և նա բոլորածիր կղզի է ի մէջ Բ (2) ծովուն, և յետ նորա Անդնդական ծովն» (էջ 4)

«Աշխարհացոյց...»

«Տոսպ և անձնացիքն, ուր կայ Սուրբ Ռիտն Հոգոց վանքն, ուր կենդանագիր պատկերն է Սուրբ Աստուածածնին...» (էջ 18)

«Տարօն Մուշ է... Եղրդուտի վանքն Սուրբ Յովհաննէս է, ուր կայ ի նշխարաց սուրբ Յովհաննու և շիշ իւղոյն...» (էջ 20)

«Հաւաքումն պատմութեան»

(Վեներտիկ. 1862)

Իսկ եթէ բարի է է (Աստուած)... քանզի էն բարի ոչ կամեցաւ միայն ունել զբարին, այլ արար բարի արարածս... (էջ 2)

...և սմա ի լեառն Բալուա, որպէս տակաւին ցուցանէ զրոշմն աստուածային վիճին և նշկարք գրերոյն... (էջ 49—50)

«Մեկնութիւն Սաղմոսաց»

«...զի ծառայք զտէրն և արարածք՝ զարարիչն թարգմանեն» (ՄՄ, ձեռ. N° 1190, էջ 288բ)

Մեկնութիւն Արարածոց»

«Ետ նմա (երկրի) արարիչն շարժական լընութիւն, անդադար, լինքենէ՝ յինքն, զի մի աստուածութեան կարծիս տացէ...» (ՄՄ, ձեռ. N° 8891, էջ 12բ)

«Իսկ որ յանկոյս Քեռնոսեսոս կղզոյն կոչեցիլոյ ծովն է՝ Անդնդական կոչի, քանզի նա բոլորածիր կղզի է ընդ մէջ երկուց ծովուց» (նույն տեղում, էջ 14բ)

«Վասն սուրբ և փրկական տնօրինական սրբութեանցն Քրիստոսի»

«Այլ Աստուածամօր պատկերն ի Հոգևոց վանքն կա՝ յԱղբակայ զաւառին...»

«Եւ շիշ իւղոյն՝ յերկիրն Տարօնոյ ի վանքն Եղրդի...»

43 Մանրամասն տե՛ս «Աշխարհացոյց»-ի 2. Պերպերյանի հրատարակութեան մեջ նշված նորայր Բյուզանդացու ծանոթագրութիւնները, էջ 29—30, 35, 36, 42, 54, 61 և այլուր։

44 Բ. Կյուլեսերյանը թեև նման սկզբնատող բերում է իբրև թե մի «Ռամ գրից», սակայն վերջինս ոչ այլ ինչ է, եթե ոչ «Աշխարհացոյց»-ի մաս։ Ուստի, բերված սկզբնատողը նույնպես պատկանում է «Աշխարհացոյց»-ին (Յուզակ ձեռագրաց Ղալաթիո ազգային մատենադարանի հայոց. Անթիլիաս, 1961, էջ 1207)։

«Հէր և ի Զարեանդ գաւառսն է ի գիւղն, որ Թաղիոս ասի՝ առաքելոյ անուանն, և Արեմաթացոյն աջն և պսակ փշոցն յիւր վէմն կայր, որ նահատակեցաւ առաքեալն սուրբ ի Զարեվանդ գաւառի, որ է Զարեանդն՝ Խոյն է...» (ՄՄ, ձեռ. № 3697, էջ 226 բ)

«Արեմաթացոյն աջն ի յԱրեանեան գաւառին, ի գեղն, որ Թաղեոսի առաքելոյ անուանի։ Եւ պսակ փշոցն իւր վէմն կա, որ նահատակեցաւ առաքեալն սուրբ ի Զարեանդ գաւառի» (Գ. Հովսեփյան. Յիշատակարանք ձեռագրաց. հ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 816)

Կարծում ենք, այս առնչությամբ որոշակի նշանակություն է ստանում նաև լեզվական հետևյալ փոքր, բայց հատկանշական փաստը։ Մեզ հայտնի է, № 2748, 3488 և այլ ձեռագրերում «պարսպի մէջն»-ի փոխարեն կարույում ենք «պարսպի միջումն»։ Բանասիրությանը հայտնի է, որ մեզ ծանոթ Վարդան անունով մատենագիրներից միայն Վարդան Արեւելցին է իր երկերում օգտագործել արևելահայերեն, ինչպես նաև «ում» վերջավորությամբ ներգոյական հոլով⁴⁵։

Մինչև այստեղ ասվածից, անշուշտ, կարելի է համոզվել, որ հիշյալ «Աշխարհացոյց»-ը հորինվել է XIII դարում, 1269—1271 թթ. ընթացքում, վաստակաշատ մատենագիր Վարդան Արեւելցու կողմից։ Խիստ համառոտախոսությունն էլ, թերևս, դարձյալ դրա ապացույցներից մեկն է, որովհետև նրա այդ տարիների աստանդական վիճակը, ինչպես նաև առողջությունն ու ծերունական տարիքը ավելի մանրամասն շարադրանքի հնարավորություն չեն բնութագրում։ Ըստ այսմ, այն գրված պիտի լինի Աղջոց, Թեղինյաց կամ Խորվիրապի վանքերից մեկում կամ գուցե և վանքերում, քանի որ այդ ժամանակ նա ապրել և գործել է միայն այդ վայրերում։

Ընդգծելով հանդերձ Հ. Պերպերյանի ծառայությունները, «Աշխարհացոյց»-ի նրա վերահիշյալ հրատարակությունը լիովին գոհացուցիչ համարել չի կարելի, քանի որ այնտեղ նկատի չեն առնված Մաշտոցի անվան Մասնահարանի 74 ձեռագրեր, բնագրագիտական, բանասիրական ոչ բոլոր հարցերն են քննված ու լուսաբանված ըստ ամենայնի։

Մատենահարանի մեծ թիվ կազմող ձեռագրերի սուր աչսոր որևէ քննական-համեմատական հրատարակության մեջ ընդգրկված չլինելը, համենայն դեպս, գիտության օգտին չէ։ Մասնավանդ, երբ հիշյալ ձեռագրերի ուսումնասիրությունը հստակ ցույց է տալիս, որ դրանք արժեքավոր են ոչ միայն «Աշխարհացոյց»-ի խմբագրությունների գատորոշման, բանասիրական աղբյուրներից հարցերի պարզաբանման, այլև նշված բոլոր հրատարակությունների համեմատությամբ ցուցաբերած բազմաթիվ տարբերություններով, հավելյալ ընդմիջարկություններով, լրացումներով, կառուցվածքային շեղումներով, սխալներով և այլն։ Ինչ խոսք, դրանց կարևոր նշանակությունը առավել աներկբայելի է դառնում։

Ավելի ևս համոզվելու համար, փորձենք ծանոթանալ առնչակից փաստերից մի քանիսին։

Եթե խորագրից իսկ սկսենք, կտեսնենք, որ կան երբեմն հիմնովին տարբեր ընթերցումներ, ինչպես՝ «Աշխարհացոյց է, զորս պատմէ մի ըստ միոջէ, սկսեալ ի յերկնից», «Աշխարհացոյց գեղեցիկ»⁴⁶։ Ուշագրավ է, մասնավանդ,

45 Հաւարումն պատմութեան, էջ 156—159։ Գ. Հովսեփյան. Ձագավանիդ ժողովը.— «Շողակաթ», էջմիածին, 1914, Ա, էջ 42, 46։ Թուրթ Կոստանդեայ կաթողիկոսի հայոց զորգրեաց առ Հեթում թագաւորն.— Գիրք թղթոց, Թիֆլիս, 1901, էջ 503—507։ Ինչպես ցույց ենք տվել ժամանակին, սույն «Թուրթը» Վարդան Արեւելցու «Ժղլանք»-ի միավորներից մեկն է և, բնականաբար, պատկանում է նրա գրչին (տե՛ս մեր Վարդան Արեւելցու «Ժղլանք»-ը.— «Բանբեր Մատենադարանի», 1967, № 8, էջ 159, 162, 163, 165, 170—171)։ Լ. Խաչիկյան. Կոստանդին Բարձրբերդցու հրատարակած թուրթը.— «Բանբեր Մատենադարանի», 1958, № 4, էջ 279, 282։ Սույն թուրթը ևս այս առնչությամբ մատնանշում ենք, որովհետև, մեր կարծիքով, այն ևս զբրվել է «ի ձեռն» Վարդան Արեւելցու։ այլ կերպ այնտեղ արևելահայերեն պիտի չլիներ, եթե իրոք շարադրված լիներ Կոստանդին Բարձրբերդցու կողմից։

46 ՄՄ, ձեռ. № 6485, էջ 87ա, 1770, էջ 79ա։

հետևյալը. «Այս է Աշխարհացոյց՝ արարեալ ի վարդապետաց ոմանց»⁴⁷։ Կարծում ենք, սա ուղղակի ակնարկութիւն է «Աշխարհացոյց»-ի խմբագրման, «մշակման» գործին մեկից ավելի անձանց մասնակցութեան։

Բոլորովին նոր հատվածների ու պարբերությունների ենք հանդիպում մի շարք ձեռագրերում։ Օրինակ. № 1487, 2567, 2748, 3657, 4205, 7085 ձեռագրական ընդօրինակությունների մեջ գոի է առնված մի ընդարձակ հատված Եդեսիայի մասին, որի սկզբնաղբյուրը, հակառակ մեր ջանքերի, կարելի չեղավ ճշտել⁴⁸։ Արդյոք թարգմանությունն է ասորական մի բնագրից։ Ինչ որ է, հետաքրքիր է նաև աղբյուրագիտական տեսակետից։

№ 3697 ձեռագրում հավելյալ գոված է մեզ արդեն ծանոթ պարբերությունը. «Հեռ և ի Զարեանդ գաւառսն է ի գիւղն, որ Թաղէոս ասի՝ առաքելու անուանն և Արեմաթացոյն աջն և սյակ փշոցն յիւր վէմն կալո, որ նահատակեցաւ առաքեալն սուրբ ի Զառեանդ գաւառի, որ է Զարեանդն Խոյ է»⁴⁹։ Նույն ձեռագրում կա հետևյալը. «Գնունի Ամուկ է բե(ր)թն անառիկ, որ կա Սուրբ ուխտն Լմայ, սուրբ Գէորգ անապատն, ծովսւպատ և Ընձանեաց սուրբ Աստուածածինն»⁵⁰։

№ 4205 ձեռագրում գտնում ենք հետևյալ նոր պարբերությունը. «Այլ և հակառակն և բազում սրբոց նզովեալն և բանադրեալն յԱղթարամ (Աղթամար — Փ. Ա.), բնակարանսն ապրստամբէից արեբկայ նեռանն»⁵¹։ Կարևոր է № 7190 ձեռագրի սույն ընդարձակ հատվածը. «Խրամ քաղաք Շամբի ձորն է, որ կա նախավկայն Ստեփաննոս և ունի ձորն այն բազում վանորայս Անդրէի առաքելոյն, որ Գորգիկ թագաւորն շինեաց զառիվեր Աստուածածինն, Սուրբ Սարգիս վանք, Սուրբ Առաքեալքն, Սուրբ Գրիգոր, Սուրբ Յովաննէս և այլ բազում նշխար սրբոց մարտիրոսաց, զոր այժմ կոչի ձորն այն Ամէնունակ մառան, զամենայն ինչ որ խնդրես կա ի նմա՝ թէ հոգևոր և թէ մարմնաւոր, որ լի է ամենայն բարեաւք, ողպէս եղեմ»⁵²։

№ 5128 ձեռագիրն ունի մի շարք նոր տեղեկություններ, այդ թվում. «Եւ սուրբ ուխտն Ապարանք, որ կա սուրբ խաչն, որ բերաւ յՍտ(մ)բօլայ»⁵³, կամ հետևյալ ընդարձակ հատվածը. «Զի Հնդստան աշխարհք և քաղաքք մեծամեծք, ողպէս Պանիան, և Պարշաւուր, և Խազնի, և Լահուր, և Խմշիր, և Պանկլուր, և Տելուր, և Սումնաթա, և Քամթայթ, և Պլուտրա, որ ձև (100 000) զեղս ունի, և այլ բազումք, և մինչև ի Սելան կղզին, որ ասեն, թէ զԱդամ հանե(ա)լ ի դրախտէն աստուած անդ բնակեցոյց զառաջինն։ Եւ այլ աշխարհք ընդարձակք, յորս հերձուած շարութեան ոչ եմուս։ և որպէս լառաջին գիրսն ցուցաք, թէ ԻՊ (24) խերատ է աշխարհս և ԺԶ խերատ՝ նոքայ են, որ կան յուղղափառութիւն, և ամենայն Յակոբիկ ասորիք և ամենայն Հայք, զորս պահեաց շնորհն աստուծոյ ի սահմանս հաւատոյ ուղղափառ կրօնից»⁵⁴։

47 ՄՄ, ձեռ. № 6567, էջ 112ր։

48 ՄՄ, ձեռ. № 1487 (41բ—42բ), 2567 (27բ—28ա), 2748 (124ա—124բ), 3657 (28բ—29բ), 4205 (465բ—466ա), 7085 (156ա—156բ)։

49 ՄՄ, ձեռ. № 3697, էջ 226բ։

50 Նույն տեղում, էջ 228ա։

51 ՄՄ, ձեռ. № 4205, էջ 465ա։

52 ՄՄ, ձեռ. № 7190, էջ 74բ—75ա։

53 ՄՄ, ձեռ. № 5128, էջ 190ա։

54 Նույն տեղում, էջ 197 ր։ Լուսանցքում իբր աղոյուր նշված է. «Միխայիլ պատմագիրն էր գրած», բայց հիշտ չէ։ Հմմտ. Տեառն Միխայիլի պատրիարքի Ասորոց ժամանակագրութիւն. Երուսաղէմ, 1870, էջ 573։ Ինչպես հայտնի է, Միքայիլ Ասորու «Ժամանակագրութեան» հայերեն թարգմանությունը առնչվում է վարդան Արեւելցու անվան հետ։ Ունենք «Ժամանակագրութեան» հայերեն երկու հրատարակություն՝ լույս տեսած 1870 և 1871 թթ. Երուսաղէմում, որոնցից առաջինն է անմիջականորեն կապվում վարդան Արեւելցու անվան հետ, ուստի և պատահական չլ, որ նշված հատվածը առկա է սրա և ոչ 1871 թ. հրատարակության մեջ։ Այս ևս վկայում է, որ և՛ «Աշխարհացոյց»-ի, և՛ 1870 թ. հրատարակության (որը ըստ էության շատ տարբեր է 1871 թ. հրատարակությունից) բնագրում գործել է միևնույն ձեռքը։

№ 2370 ձեռագրում կա հետևյալ լրացումը. «...որդի Դերենկին, զոր կաց թագաւոր ընդդէմ Սմբատին Բագրատունոյ»: Նույն այս ձեռագրում չորս Ավետարանների գրության մասին կա մի հետաքրքիր տարբերակ նախադրություն, որ բավականին ուրույն է⁵⁵:

№ 8100 ձեռագիրը ևս հավելյալ հայտնում է. «...Ձորոյ գետն յԱնու, որ ասեն Արփաշայի, անդ է Ղօշավանքն Սուրբ Յովանէս և Սուրբ Գէորգ զարմանաշէն և հռակաւոր աթոռ, և կան բազում եկեղեցիք, և (40) խորան է, և (40) պատարագ կու լինի աւուրն»⁵⁶:

Եւ այսպես, այստեղ նշված և շնչված մյուս ձեռագրերում բնագրական տարբերութիւնները և հավելումները քիչ չեն: Կառուցվածքային որոշակի տեղաշարժեր ու սարքերութիւններ նկատվում են մասնավորաբար № 3119, 1720, 7098, 6485, 6624, 7190, 7993 ձեռագրերում: Տարբերակները բաղմամբիւ են: Օրինակ. Դամասկոս Շամ է փի. Դամասկոս Դըմըշի է, Արշուց փի. Աղշոց, Խօշխոնի փի. Խօշօնի, Քրմանիկ փի. Քարթմանիկ, Աւանիկ փի. Անառիկ և այլն⁵⁷:

Բերված այս սակավաթիւ տվյալներն էլ բավական են եզրակացնելու, որ, իրոք, «Աշխարհացոյց»-ի Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող ձեռագրերը բնագրագիտական և բանասիրական կարևոր, օգտակար բազմաթիւ լրացումների, ճշգրտումների և պարզաբանումների հնարավորութիւններ են ընձեռում, որոնց հետ, անտարակույս, պիտի հաշվի նստել:

Ըստ այսմ, քննական-համեմատական մի նոր, առավել ընդգրկուն, բանասիրական աճող հետաքրքրութիւնները գոհացնող բնագիր կազմելու և հրատարակելու անհրաժեշտութիւնը ակնբախ է:

Մեր հիմնական եզրակացութիւնն այս է. «Արարեալ է Աշխարհացոյց» նորոգ թարգմանչին և երկրորդ լուսաւորչին Վարդանայ՝ պարզ և համառօտ սխտութեամբ» և նույն կամ նման խորագրերով մեղ է հասել պատմաաշխարհագրական բովանդակությամբ միանգամայն արժեքավոր մի բնագիր: Ունի երկու հիմնական խմբագրութիւն՝ համառօտ և ընդարձակ, վերջինս իր տարբերակը՝ «Երրորդ» կամ «խառն»: Խմբագրութիւններից ոչ մեկը ինքն իր մեջ միատարր չէ, բոլորն էլ կրել են փոփոխութիւններ՝ թե՛ կառուցվածքային, թե՛ բնագրական, խմբագրվել և ընդմիջարկվել են: Առաջին անգամ խմբագրվել է XIV դարի առաջին կեսին առ այսօր մեղ անհայտ մի անձի կողմից, ստեղծելով համառօտ և ընդարձակ խմբագրութիւնները («խառն» տարբերակ): Ընդարձակը իր հերթին ենթարկվել է կրկնակի խմբագրման XV—XVI դդ. ընթացքում:

«Աշխարհացոյց»-ը շատ լայն տարածում է գտել. ըստ երևույթին օգտագործվել է իբրև ուսուցողական ձեռնարկ: Պահպանվել է ավելի քան հարյուր ընդօրինակութիւն:

«Աշխարհացոյց»-ը հորինվել է XIII դարի 70-ական թթ., մեծ հավանականութեամբ՝ 1269—1271 թթ.: Հեղինակը XIII դարի վաստակաշատ մատեն-

55 ՄՄ, ձեռ. № 2370, էջ 237ա, 241բ:

56 ՄՄ, ձեռ. № 8100, էջ 254բ:

57 ՄՄ, ձեռ. № 3657, էջ 33բ, 24բ, 26ա, 3119, էջ 87ա, 7085, էջ 26ա:

նագիր վարդան Արևելցին է։ Ունեցել է 4 հրատարակություն։ Մենք պատահապատում ենք նորը, քննական համեմատական բնագիրը՝ ընդգրկելով նաև Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերը։ Այն կունենա ընդարձակ ներածություն, ծանոթագրություններ և անվանացանկեր։

«ГЕОГРАФИЯ» ВАРДАНА ВАРДАПЕТА

П. П. АНТАБЯН

Резюме

В статье подвергнута филологическому анализу армянская «География» («Աշխարհայից») XIII века; в частности, разбираются вопросы времени ее создания и авторства. После известной «Географии» VII века по своему характеру, содержанию и территориальному охвату это второй по значению географический сборник во всей армянской средневековой литературе. Его историко-географическая и культурная ценность для Армении, армянского народа, сопредельных и даже отдаленных стран и народов совершенно очевидна. «География» не выпадала из поля зрения исследователей, сборник издавался четырежды, ныне готовится к изданию новый критический текст, и тем не менее разногласия по поводу авторства и времени написания существуют и сегодня. Часть исследователей считает, что сборник не мог быть создан ранее XIV—XV вв. (следовательно, Вардан Аревелци, умерший в 1271 г., не мог быть его автором). Другие находят, что автором его является Вардан Аревелци, поскольку данные, ставящие под сомнение время создания сборника, являются позднейшей интерполяцией. Однако эти последние исследователи доказывали позднейшее происхождение лишь части данных, остальная же часть нуждалась в определении. Отсюда и неопределенность в вопросах датировки и атрибуции. В нашей статье на основе досконального исследования доказывается, что данные, остававшиеся прежде неопределенными, также должны быть отнесены к интерполяциям и что «География» была создана в XIII веке— по всей вероятности, между 1269 и 1271 гг.; автором ее определено является Вардан Аревелци.